ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/119

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 03.12.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) 03.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«05.11.2018թ. ՀՀ Ֆինանսների նախարարության գնումների համակարգում (www.gnumner.am) հրապարակվել է «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կարիքների համար գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման ու փաթեթավորման համար անհրաժեշտ սարքերի ու սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՊՁԲ-2018/45 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) հայտարարություն և հրավեր:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների 13.11.2018թ. վերջնաժամկետից երկու օր շուտ հայտ է ներկայացրել նաև «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 14.11.2018թ. ժամը 10:30-ի կայացրած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ նաև Կոմիտե)՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու կամ չունենալու վերաբերյալ:

Կոմիտեի կողմից տրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածով նախատեսված շեմը գերազանցող հարկային պարտավորություններ, թետեպ չի նշվել, ժամկետանց պարտավորությունները որ հարկման տեսակից է գոյացել և արդյոք այն համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի հարկի տեսակ է հանդիսանում:

Վերոգրյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել է մերժել Ընկերության հայտը:

«ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ն համաձայն չէ վերը նշված որոշման և Կոմիտեի եզրակացության հետ, քանի որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 11.04.2018թ. թիվ 245-Ա հրամանով սահմանված հավելվածի՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների, միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա պաշտոնական քաղվածքի համաձայն՝ Ընկերությունն ընդհանրապես չի ունեցել հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, այլ ունի սահմանաված չափից ավել վճարած գումարներ:

Ընկերությունը, հիմք ընդունելով վերոհիշյալ պաշտոնական քաղվածքից վերցված տվյալները և համոզված լինելով, որ «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի հարկային

պարտավորությունների չափը՝ տվյալ իրադրությունում չի ունեցել ժամկետանց պարտավորություններ, չի գերազանցում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը, հայտ է ներկայացրել և մասնակցել Ընթացակարգին:

Սակայն, ի զարմանս Ընկերության, պարզվել է, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություններ:

Ցանկանում եմ ավելացնել նաև, որ Ընկերության պարտքը փաստացի դրոշմանիշային գծով է եղել և այն գոյացել է 2017թ. փետրվարից՝ 17 ամսվա կտրվածքով ընկերության աշխատակիցների հանրագումարով նախատեսված ընդհանուր գումարից յուրաքանչյուր ամիս հազարական ՀՀ դրամ քիչ վճարելու հանգամանքով, ինչը դրոշմանիշային վճարների գծով կանոնակարգի ոչ լիարժեք՝ թերի լինելու հանգամանքով է պայմանավորված եղել: Միևնույն ժամանակ դրոշմանիշային վճարների գծով մինչև վերջին ժամանակներս չեն դիտարկվել Կոմիտեի կողմից վերահսկվող հարկային պարտավորություններ, ինչը երևում է Հարկային ծառայության կայքից:

Հայտնում եմ, որ Ընկերությունը բավարարում է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կերտով սահմանված պահանջները, քանի որ տվյալ պարագայում, Ընկերությունը Ընթացակարգի արդյունքում՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացնելու պայմաններում ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, սակայն Կոմիտեի կողմից տրված եզրակացության պատճառով զրկվել է պայմանագիր կնքելու հնարավորությունից, դրանով իսկ մեկուսացվելով պայմանագրի կողմ հանդիսանալուց:

Ելնելով վերոշարադրյալից և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ -ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ, միաժամանակ հանդիսանալով բարեխիղճ և պարտաճանաչ հարկատու՝ ինչի մասին է վկայում 14.11.2018թ. դրությամբ միասնական հաշվում առկա 959.915 ՀՀ դրամ գումարի չափը:

«ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է.

Պարտավորեցնել ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՊՁԲ-2018/45 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի գնահատող հանձնաժողովին «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և վերականգնել ընկերության ոտնահարված իրավունքը՝ կնքելով «գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման ու

փաթեթավորման համար անհրաժեշտ սարքերի ու սարքավորումների» ձեռքբերման պայմանագիր:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Մասիս Խաչատրյանը:

2. «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված.

«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը 11.12.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի 03.12.2018թ. հայտարարությամբ քննվող ԳԲԽ-ԷՍ-2018/119 ծածկագրով բողոքի վերաբերյալ ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՊՁԲ-2018/45 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.11.2018թ. կայացրած որոշումները մնում են անփոփոխ:

Միաժամանակ հայտնում եմ, որ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ և Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից իրականացվող «Գործընկերության հանուն գյուղական համայնքների բարգավաճում» ծրագիրն ավարտվում է 31.12.2018թ.:

Հաշվի առնելով վերոգրյալը խնդրում եմ, բողոքի քնությունն ու դրա վերաբերյալ որոշումը կայացնել հնարավորինս արագ ընթացակարգով:»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի լիազորված ներկայացուցիչներ Արմինե Նամալյանը և Արթուր Էլոյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2018/119 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 03.12.2018թ ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՊՁԲ-2018/45 ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր) ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՊՁԲ-2018/45 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 14.11.2018թ ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 և 22.11.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3

արձանագրությունները, 13.11.2018թ. դրությամբ Ընկերության՝ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 19.12.2018թ. «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ին տրված թիվ 2611 տեղեկանքը, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 22.11.2018թ. տրված եզրակացությունը.

«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կարիքների համար՝ գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման ու փաթեթավորման համար անհրաժեշտ սարքերի ու սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՊՁԲ-2018/45 ծածկագրով գնանշման հարցում, (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ն:

Ընկերության կողմից առաջարկված գնային առաջարկը 3-րդ չափաբաժնի համար կազմել է՝ 940.000 ՀՀ դրամ:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՊՁԲ-2018/45 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 14.11.2018թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետով որոշել է Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի համար առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ին:

Հանձնաժողովը 22.11.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության.

- 5.1 կետով որոշել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում ուղարկել ՀՀ պետական եկամուտների կոմիտե ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՊՁԲ-2018/45 ծածկագրով մրցույթի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի մասին պահանջվող տեղեկատվություն ստանալու նպատակով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 22.11.2018թ. տրամադրած եզրացության համաձայն՝ «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից

վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն՝ 16.000 ՀՀ դրամ գումարի չափով:

- Նույն կետով արձանագրել է, որ «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի համար ներկայացված տեղեկատվությունը համարվել է իրականությանը չհամապատասխանող:

- 6.2 կետով որոշել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի համաձայն «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Բողոքի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՊՁԲ-2018/45 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված 16.000 ՀՀ դրամ գումարի չափով ժամկետանց հարկային պարտավորությունն՝ ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 19.12.2018թ. «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ին տրված թիվ 2611 տեղեկանքի, գոյացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ն հայտը ներակայացնելու օրվա դրությամբ (13.11.2018թ.) հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի և Ընկերությունը՝ հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» 13.11.2018թ. դրությամբ քաղվածքը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ, որի համաձայն Ընկերությունը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 19.12.2018թ. «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ին տրված թիվ 2611 տեղեկանքը, որի համաձայն արձանագրված պարտավորությունը դրոշմանիշային վճարների գծով է:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ. եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի

շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կարիքների համար՝ գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման ու փաթեթավորման համար անհրաժեշտ սարքերի ու սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՊՁԲ-2018/45 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

• 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 7.14 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամա¬դրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ

տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 22.11.2018թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացության համաձայն՝ «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (13.11.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է 16.000 ՀՀ դրամ:

- «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարների գծով:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ն հայտը ներակայացնելու օրը առաջնորդվել է Ընկերության «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն՝ «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա (13.11.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն առկա չէ:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել

Ընկերության իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ Ընկերությունն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկությունը կարող էր ձեռք բերել բացառապես Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ տվյալ դեպքում արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա (13.11.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի կողմից 03.12.2018թ ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Պարտավորեցնել ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՊՁԲ-2018/45 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ